Պարույր Սևակ

Խուսափում եմ

Ես խուսափում եմ
Թեթև դերերից,
Էժան սերերից
Եվ ա՛յն նորերից,
Որ հաստատվելիս
Ու թուխս նստելիս
Միշտ հինն են ծնում.
Եվ ա՛յն օրորից,
Որ քուն չի բերում,
Այլ, ավելի շուտ, քուն է փախցընում...
Մի՛շտ խուսափելով,
Ճի՛շտ խուսափելով՝
Պիտի չհասնեմ և ա՛յն դրության,
Երբ փափուկ բանի հեշտ կտրվելը
Վերագրվում է թրի սրության.
Լողալ չիմացող մարդու խեղդվելը՝
Լճի խորության.
Ստիպողաբար կռվում հաղթվելը՝
Սրտի բարության.
Օժտված մարդու հաշողությունը՝
Քաջնազարության.

Իր սկզբունքին հաստատ մնալը՝
Մտքի քարության...
Ես խուսափում եմ դեռ շա՜տ բաներից:
Ես խույս եմ տալիս
Թեթև բաներից վիրավորվելուց.-
Շատ եմ ինքնասեր.
Եվ անպատասխան սիրահարվելուց.-
Սիրառատ եմ շատ.
Եվ շիլ դառնալուց՝
Իմ խեղճ աչքերի անվերջ չովելուց.-
Զարմանում եմ դեռ.
Ամեն կշեռքի թաթին դրվելուց.-
Իմ քաշը գիտեմ.
Ամեն առիթով իսկույն սրվելուց.-
Եվ ի՜նչ եմ տաշում,
Լոկ ի՛նձ եմ մաշում...
Չե՜մ ուզում տրվել, ամեն մի կրքի,
Չե՛մ ուզում տրվել.-
Ես շատ եմ կրքոտ.
Չե՜մ ուզում կռվել հիմարների հետ,
Չե՛մ ուզում կռվել.-
Էլ ջիղ չմնա՜ց.
Ուզում եմ ծռվել՝ բա՜ն չի ստացվում
Եվ չի՛ ստացվի.-
Բունս է հաստացել...
Գուցե վտարվե՞լ ուրախ շրջանից.-
Հաճախ եմ տխրում.
Գուցե վթարվե՞լ՝ մեքենայի պես.-
Մաշվում եմ անվերջ.
Գուցե կտրրվե՞լ այս խոկումներից.-

Ես էլ եմ հոգնում...
Ես խույս եմ տալիս և զուր այրվելուց.-
Ո՞ւր եք , մրսողնե՛ր,
Մո՛տ եկեք գոնե.
Ես խույս եմ տալիս և զուր լարվելուց.-
Դեռ շա՛տ գործ ունեմ,
Որ չարվի՛ գուցե...
Ես խույս եմ տալիս
Ամեն քամոցով իսկույն թորվելուց.-
Զուր եմ հանքային:
Ես խույս եմ տալիս,
Բայց չեմ վախենում շուտ պղտորվելուց.-
Աղբյուր եմ լեռան:
Ես խույս եմ տալիս,
Բայց չեմ սարսափում և խոտորվելուց.-
Ճամփա կգտնեմ...
...Եվ չխուսափե՞մ այն դրությունից,
Որ լոկ գալիս է մեր խլությունից:
Խուլին ասում են.
- «Ցուրտ է, չես մրսո՞ւմ»:
Խուլն էլ ասվածը խլաբար լսում
Եվ ի պատասխան իրենն է ասում.
- «Հա՛, ճիշտ եք լսել, մեր անտեր ցուլը
Կա-չկա կարծեց, թե փորոտիք է՝
Զարկեց ու պատռեց մեր գինու տիկը...»:
Ես խույս եմ տալիս ո՛չ թե խուլերից,
Այլ կարաս ջարդող
Ու տկճոր պատռող
Բոլո՛ր անմակդիր նման ցուլերից...

14-15.VI.1957թ.
Մոսկվա